ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼԻ
ИЗВЕСТИЯ АРМЯНСКОГО ФИЛИАЛА АКАДЕМИИ НАУК СССР
№ 1, 1943

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

ԵՐԿՈՒ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԳԱՂԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ (1914—1916 թ. թ.)

Հայ ժողովրդի նկատմամբ գերմանական իմպերիալիզմի վարած արյունոտ քաղաքականությունը հանրահայտ փաստ է։ Մեր գրականության մեջ կարելի է հանդիպել գերմանական իմպերիալիզմի գաղանային դեմքը պարզող ոչ քիչ նյութեր։

Սակայն միաժամանակ պետք է նշել այն հանգամանքը, որ մենք ունենք գերմանական իմպերիալիզմի դեմքը մերկացնող նաև շատ այլ վաստակաթղթեր, որոնք դեռևս հրապարակված չեն և առայժմ մնում են արխիվային փոշու տակ։

Հայաստանի Պետական Կենտրոնական Արխիվի № 57 ֆոնդում պահվում է մի ձեռագիր աշխատություն, որ ունի «Անց ու դարձ Կարնո և հարակից գաւառաց» վերնագիրը։ Արևմտահայ լեզվով գրված այդ ձեռագիրը, որի հեղինակն է ոմն Եղիշե Խանամիրյան, պատմում է 1914—1916 թ.թ. չրջանում Կարինի ու հարևան գավառների անցուդարձի և մասնավորապես հայկական կոտորածների մասին։ Եվ ահա՝, ձեռագրի հեղինակը, մյուս անցքերի հետ միասին, որպես ականատես, պատմում է նաև մի քանի հետաքրքիր փաստեր հայ ժողովրդի նկատմամբ գերմանական իմպերիալիզմի վարած ջարդարարական քաղաքականության մասին։

Ձեռագրի 15-րդ էջում հեղինակը բերում է մի փաստ այն մասին, թե իմպերիալիստական գիշատիչներին հատուկ ինչպիսի ցինիկ պատասխան է տալիս տխրահռչակ Շուլլենբուրգը՝ տաճկահայերի կոտորածների կապակցությամբ իրեն դիմող մի քանի անձանց։

«Անգամ մը,— գրում է ձեռագրի հեղինակը,— երբ ամերիկյան միսիոներների հետ գնացած էի գերման հյուպատոսին տեսության, երբ խոսք ընկավ հայոց ջարդերու մասին, նա այսպես արտահայտեցավ. «Ինչ որ կխոսին հայոց ջարդերու նկատմամբ, բոլորն ալ չափազանցյալ լուրեր են, և իրականությունն այս է, որ անոնք ապահով կերպով տեղափոխված են ներքին գավառները. և թե ինչո՞ւ կզարմանաք, վասն զի հայերն իրենց արդար պատիժն էր որ կրեցին։ Պատերազմն առաջ, երբ ես Թիֆլիս հյուպատոս էի, հրավիրեցի հայերուն, որ ձգեն ռուսները և Գերմանիո կողմը հակեն, սակայն հետևեցան ռուսներուն և ահա այսօր արդար պատիժնին կրեցին»։

Մի այլ տեղ խոսելով տաճկական հիվանդանոցների և նրանցում տիրող կարգերի մասին, ձեռագրի հեղինակը գրում է.

---

1 ՀՍՍՌ Պետ. կենտ. Արխիվ, Ֆոնդ № 57, գործ № 632, էջ 15։

«Վիրավորներու սկզբնական հիվանդանոցները ամերիկյան չեզոքերն եղան, ուր կուսային պատերազմի դաշտի մեջ վիրավորյալները միայն, մեկ անգամ վերքերնին ռազմադաշտը կապելով: Այդ պարագային այդ հիվանդանոցների մեջ ալ կգործեին երկու գերմանական քույրեր, որոնցմե մին շվեդացի, իսկ մյուսը բնիկ գերմանացի. վերջինին վերաբերմունքը և ընդունելությունը հանդեպ հայ զինվորներու շատ գեշ էր... երբ հայ մը կտեսներ, անմիջապես երեսը կըթթվեցներ, կծու-կծու կխոսեր անոնց հետ: Ամերիկացի բժիշկ դոկտոր Դեյս այս բանը նկատելով—ինքն ալ անոնց հակառակը կըներ»:

Այնուհետև խոսելով գերմանական զինվորականների վայրագությունների մասին, հեղինակը գրում է.

«Հայերու աքսորման միջոցին, հայերը ինչպես միսիոներների քով թողուցած էին աղջիկներ, գերման հյուպատոսին ալ քովը մի քանի հատ թողուցած էին, սակայն գերմանները... իրենց խնամքին հանձնյալ հայ դժբախտուհիներին կրոնաբարեն և ողջի կթողնեին»[2]:

ՀՍՍՌ Պետական Կենտրոնական Արխիվի № 68 ֆոնդում (գործ № 2789) գտնվում է չհրապարակված մի այլ ձեռագիր աշխատություն՝ հետևյալ վերնագրով. «Տեղեկագրական և Տեղագրական Երզնկայի»: Ձեռագրի հեղինակը, ոմն Գ. Թուրիկյան, իր այս աշխատանքը կազմել է 1917 թ. հունվարին: Տալով զանազան տեղեկություններ Երզնկայի գավառի մասին, ձեռագրի հեղինակը մանրամասնորեն պատմում է 1916 թվին Երզնկայում տեղի ունեցած զանազան անցքերի մասին: «Հայերը կմեռնեին—գերմանացիք կզվարճանային» ենթավերնագրի տակ նա պատմում է հետևյալը.

«Երզնկայի բնիկ հույներեն մեկ կպատմեր, թե բանտարկյալ երիտասարդներ երբ կապված շարան շարան բանտեն դուրս կհանեին սպանելու համար, անոնց մեջ կային տարիք առած ու երիտասարդ անձեր, բոլորն ալ զինվորական ու փափկակենցաղ, որոնք սակայն ծեծի ու զանակոծության տակ, զարկով, խաչով, երկաթով, կրակով և արցունով տեղի տրված չարչարանքներու և տառապանքներու տակ ընկճված, նիհարած, ոտքերը և աչքերու կոպերը ցեխով պատված, գլուխնին արյունթաթախ ու պատռված, ոսկորնին դուրս ցցված և աչքերնին խորունկցած ըլլալով մեկ քանի օրվան մեջ իսկ անճանաչելի դարձած էին:

Ու այս ամենուն քով, երբ ամենեն քարասիրտներն ալ սրտնեղություն կզգային՝ անգին գերմանացի սպաներ ամենայն պաղարյունությամբ և մեծ եռանդով լուսանկարիչի գործիքներ գետեղելով, կարծես ուրախ էին հիշյալ դիակնացած բանտարկյալներու լուսանկարը առնելով»[3]:

Գերմանական իմպերիալիստները կատարում էին իրենց արյունոտ, զզվելի գործը և ապա այնուհետև հիանում, զվարճանում նրանով: Եվ զարմանալի չէ, որ նրանց արժանավոր զավակներն այսօր հանդիսանում են հիտլերյան մարդակեր ֆաշիստները:

ՆԺԳԿ Պետական արխիվների բաժնի պետ Կ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

---

1 ՀՍՍՌ Պետ. Կենտ. Արխիվ, Ֆոնդ № 57, գործ № 632, էջ 3.
2 Նույն տեղ, էջ 16.
3 Նույն տեղ, Ֆոնդ № 57, գործ 620, էջ 13.